ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐԵՎԱԴԱՇՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ԹԻՎ 9

« 22» փետրվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետ պարոն՝
Հ.Մաթևոսյանին

Հարգարժան պարոն Մաթևոսյան

Կից ուղարկվում է Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 18.02.2021թ թիվ 2 նիստի որոշումները։

Առդիր 10 թերթ։

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 01-04307-2021
22 02 2021 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

18.02.2021թ N 5

*ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և 13-րդ հեղվածի 4-րդ մասով .

*ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավագանու 2021 թվականի փետրվարի 18-ի թիվ 2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | /կողմ/ | / դեմ/ | /ձեռնապահ/ |
|---|---|---|---|
| 1.Վ.Վարդանյան | ------------------ | -------------- | ------------------- |
| 2 .Մ. Օհանյան | ------------------ | -------------- | ------------------- |
| 3.Խ.Աբասյան | ------------------ | -------------- | ------------------- |

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

18.02.2021թ.
Համայնք Արևադաշտ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի
Ավագանու 2021թվականի փետրվարի 18-ի
Թիվ 2-նիստ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

5. ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ ՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի ԹԻՎ 2 –ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան/

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ՝ 3.0021 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ, 2.6 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ, 0.7751 ՀԱ ՋՐԱՅԻՆ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ.Օհանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

18.02.2021թ. N 6-Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2020թվականի դեկտեմբերի 29-ի<< Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 25-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝ համաձայն հավելված N 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Համայնքի ավագանու անդամներ՝

| | /կողմ/ | / դեմ/ | /ձեռնապահ/ |
|---|---|---|---|
| 1.Վ.Վարդանյան | ------------------ | -------------- | -------------------- |
| 2 .Մ. Օհանյան | ------------------ | -------------- | -------------------- |
| 3.Խ.Աբասյան | ------------------ | -------------- | -------------------- |

Արևադաշտ համայնքի ղեկավար Հ.Օհանյան

18.02.2021թ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021թ
ՓԵՏՐՎԱՐԻ 18-ի N 6-Ն ՈՐՈՇՄԱՆ

# ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 25-Ն ՈՐՈՇՄԱՆ

1) Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի բյոջեի եկամուտներ բաժնից հողի հարկին ավելացնել 621.800 դրամ և ծախսերը ուղղել նախորդ տարիների աշխատավարձի պարտքին 01-1-1 4111 հոդվածից 621.800 դրամ

2) վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը 129900 դրամը ուղղել ֆոնդային բյուջե և այն ուղղել վարչական սարքավորումներ ձեռք բերելու համար:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**


*0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 594015*

*Էլ. Փոստ suren.galstyan@justice.am*


N 06/27.1/2530-2021

«05» փետրվարի 2021 թ.

**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**

**ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՊԱՐՈՆ Հ. ՕՀԱՆՅԱՆԻՆ**

**Հարգելի պարոն Օհանյան**

Ի պատասխան Ձեր 2021 թվականի հունվարի 26-ի 6 գրության՝ կից ներկայացվում է «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 25-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

2/8/2021

X

Suren Galstyan

**ՍՈՒՐԵՆ ԳԱԼՍՏՅԱՆ**

Կատարող՝ Մարիամ Սահակյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. /010/ 59 41 13

Արդարադատության
Նախարարություն

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**«Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 25-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

1. Նախագծի անվանման մեջ «ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ» բառերը:
2. Նախագծի 1-ին կետից անհրաժեշտ է հանել «և /հատվածներում/» բառերը:

Իրավական ակտերի փորձաքննության
գործակալության պետ՝

2/5/2021

X

Emil Margaryan

Signed by: MARGARYAN EMIL 4014910245

ԷՄԻԼ ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N-25-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի ավաղանու 2020 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 29-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> Արևադաշտ համայնքի ավագանու որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Արևադաշտ համայնքի 2020 թվականի աշխատավարձի պարտքը վճարելու համար համայնքի բյոջեի եկամուտներ բաժնից հողի հարկին ավելացնել 621.800 դրամ : Վարչական բյուջեի տարեսկզբի մնացորդը 129900 դրամը ուղղել ֆոնդային բյուջե և այն ուղղել վարչական սարքավորումներ ձեռք բերելու նպատակով:
Ուստի սույն փոփոխությունններն ուղված են բյուջետային համակարգի միասնականությունն ապահովող բյուջետային գործընթացի կազմակերպման համաձայնեցված սկզբունքներին, դասակարգման ,հաշվառման և հաշվետվության միասնական մեթոդաբանության հիման վրա:
Քանի որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին N 29-Ն որոշումը կրում է նորմատիվ իրավական բնույթ, ապա << Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտում փոփոխություն կամ լրացում կքարող է կատարվոլ միայն նույն տեսակի և բնույթի նորմատիվ իրավական ակտով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

18.02.2021թ. N 7

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 23-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ***<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածի առաջին մասով***, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77- րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի ներկայացված փաստաթղթերը .

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքի 2020թվականի դեկտեմբերի 15-ի << Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արևադաշտ համայնքապետարանում և գրադարանում գույքագրում անցկացնելու և գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին >> N 15 որոշման N 1 հավելվածի մեջ կատարել հետևյալ լրացումը՝ համաձայն հավելված N 1:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | /կողմ/ | / դեմ/ | /ձեռնպահ/ |
|---|---|---|---|
| 1.Վ. Վարդանյան | ---------------- | -------------- | ------------------- |
| 2 .Մ. Օհանյան | ---------------- | ------------- | ------------------ |
| 3.Խ.Աբասյան | ------------------- | --------------- | -------------------- |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՆԱՂԱՇՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021
ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի
ԹԻՎ 2ՆՐՈՇՄ N 7ԱՐՈՇՈՒՄ

***Արնաղաշտ համայնքի համայնքապետարանի սեփականություն հանդիսացող գույքի 2021թ գույքագրման փաստաթղթերում լրացում կատարելու մասին***

*ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ*

*համայնք Արնաղաշտ* *18 փետրվարի 2021թ*

| հ/հ | Գույքի անվանումը | Մուտքագրման տարեթիվը | Սկզբնական արժեքը | քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | Համակարգիչ PHIIPS/ /պրոցեսոր/ CAOH | 2021թ. | 208000դրամ | 1/մեկ/ |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

18.02.2021թ N 8

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎԱԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ՝ 3.0021 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ, 2.6 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐ, 0.7751 ՀԱ ՋՐԱՅԻՆ, ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 63-րդ հոդվածով , «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Թույլատրել աճուրդային կարգով օտարել համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության
1/ / ծածկագիր 04-025-0224-0029/ 3.0021հա 4-րդ կարգի արոտավայր : Վաճառվող հողամասի մեկնարկային գին՝ 303.962.62 ՀՀ դրամ :
2/ / ծածկագիր 04-025-0224-0028/ 2.6 հա 4-րդ կարգի արոտավայր : Վաճառվող հողամասի մեկնարկային գին՝ 263.250 ՀՀ դրամ :
3/ / ծածկագիր 04-025-0244-0002/ 0.7751հա 4-րդ կարգի ջրային : Վաճառվող հողամասի մեկնարկային գին՝ 78.478.87 ՀՀ դրամ :
Աճուրդի մեկ քայլի նվազագույն չափը կազմում է աճուրդի առարկայի մեկնարկային գնի 5 տոկոսը:
Մասնակցության վճարը կազմում է 5000ՀՀ դրամ:
2. Աճուրդի հրապարակայնությունն իրականացնել օրենքով սահմանված կարգով:
3.Առաջարկել համայնքի ղեկավարին սահմանված կարգով իրականացնել սույն որոշումից բխող իրավական գործառույթները:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| | /կողմ/ | / դեմ/ | /ձեռնպահ/ |
|---|---|---|---|
| 1.Վ.Վարդանյան | [signature] | -------------- | ------------------- |
| 2 .Մ. Օհանյան | [signature] | ------------- | ----------------- |
| 3.Խ.Աբասյան | [signature] | ------------- | -------------------- |

Արևադաշտ համայնքի ղեկավար [signature, stamp] Հ.Օհանյան

Համայնք Արևադաշտ